



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

N 18-82  
18.09.2018

ՀՀ արդարադատության նախարար  
Պարոն Արտակ Զեյնալյանին

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Զեյնալյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ այցելության ժամանակ դիտարկել են [redacted] խցի պայմանները: Նշված խցի հատակին, պատերին, սառնարանի և նույնիսկ պահարանների մեջ առկա են եղել միջատներ: Մինևույն ժամանակ պետք է արձանագրել, որ բազմաթիվ տարբեր միջատներ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում արձանագրվել են այլ խցերում նույնպես:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում անցկացնել սանիտարական աշխատանքներ:

Հարգանքով՝  
Խմբի նախագահ

Հասմիկ Հարությունյան

180918